ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 6

ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի խորհրդի 2011թ. մարտի 18-ի նիստի

Խորհրդի 32 անդամներից ներկա էին 24-ը: Նախագահում էր խորհրդի նախագահ Գ. Ղազինյանը, քարտուղարում՝ խորհրդի քարտուղար Տ. Դավթյանը: Քվորումը ստուգելուց հետո խորհրդի նախագահը քվեարկության դրեց օրակարգը, որը միաձայն հաստատելուց հետո խորհուրդն անցավ օրակարգի հարցերի քննարկմանը (օրակարգը կցվում է):

1. Գիտական կոչումների շնորհում.

1.1. ԼՍԵՑԻՆ. ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի մրցութային հանձնաժողովի միջնորդությունը քաղաքացիական իրավունքի ամբիոնի դոցենտ, իրավ. գիտ. դոկտոր Արմեն Հայկյանցին՝ պրոֆեսորի գիտական կոչում շնորհելու մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Իրավագիտության ֆակուլտետի մրցույթային հանձնաժողովի նախագահ դոցենտ Ս.Դիլբանդյանը ծանոթացրեց թեկնածուի անձնական գործի տվյալներին, հայտնեց, որ Ա. Հայկյանցի կողմից ներկայացված փաստաթղթերը համապատասխանում են պրոֆեսորի գիտական կոչում շնորհելու մասին ՀՀ կառավարության կողմից սահմանված պահանջներին, ինչպես նաև ներկայացրեց հավակնորդի թեկնածության վերաբերյալ համապատասխան ամբիոնի միաձայն երաշխավորությունը և ֆակուլտետի մրցույթային հանձնաժողովի դրական եզրակացությունը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Տ.Բարսեղյանը, Ա. Իսկոյանը, Ա. Գաբուզյանը, Գ. Ժետրոսյանը, Ս.Մեղրյանը, Գ.Ղազինյանը:

Խորհուրդը որոշեց անցկացնել բաց քվեարկություն, որի արդյունքում միաձայն բավարարվեց մրցութային հանձնաժողովի միջնորդությունը:

ՈՐՈՇԵՑԻՆ. Հաստատել քվեարկության արդյունքները և միջնորդել ԵՊՀ գիտական խորհրդին՝ քաղաքացիական իրավունքի ամբիոնի դոցենտ, իրավ. գիտ. դոկտոր Ա. Հայկյանցին շնորհել պրոֆեսորի գիտական կոչում:

1.2. ԼՍԵՑԻՆ. ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի մրցութային հանձնաժողովի միջնորդությունը քաղաքացիական իրավունքի ամբիոնի ասիստենտ, իրավ. գիտ. թեկնածու Տաթևիկ Դավթյանին՝ դոցենտի գիտական կոչում շնորհելու մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Իրավագիտության ֆակուլտետի մրցույթային հանձնաժողովի նախագահ դոցենտ Ս.Դիլբանդյանը ծանոթացրեց թեկնածուի անձնական գործի տվյալներին, հայտնեց, որ Տ. Դավթյանի կողմից ներկայացված փաստաթղթերը համապատասխանում են դոցենտի գիտական կոչում շնորհելու մասին ՀՀ կառավարության կողմից սահմանված պահանջներին, ինչպես նաև ներկայացրեց հավակնորդի թեկնածության վերաբերյալ համապատասխան ամբիոնի միաձայն երաշխավորությունը և ֆակուլտետի մրցույթային հանձնաժողովի դրական եզրակացությունը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Տ.Բարսեղյանը, Ս.Մեղրյանը, Ա.Գաբուզյանը, Գ.Ղազինյանը:

Խորհուրդը որոշեց անցկացնել բաց քվեարկություն, որի արդյունքում միաձայն բավարարվեց մրցութային հանձնաժողովի միջնորդությունը:

ՈՐՈՇԵՑԻՆ. Հաստատել քվեարկության արդյունքները և միջնորդել ԵՊՀ գիտական խորհրդին՝ քաղաքացիական իրավունքի ամբիոնի ասիստենտ, իրավ. գիտ. թեկնածու Տ. Դավթյանին շնորհել դոցենտի գիտական կոչում:

1.3. ԼՍԵՑԻՆ. ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի մրցութային հանձնաժողովի միջնորդությունը եվրոպական և միջազգային իրավունքի ամբիոնի ասիստենտ, իրավ. գիտ. թեկնածու Կարեն Գևորգյանին՝ դոցենտի գիտական կոչում շնորհելու մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Իրավագիտության ֆակուլտետի մրցույթային հանձնաժողովի նախագահ դոցենտ Ս.Դիլբանդյանը ծանոթացրեց թեկնածուի անձնական գործի տվյալներին, հայտնեց, որ Կ. Գևորգյանի կողմից ներկայացված փաստաթղթերը համապատասխանում են դոցենտի գիտական կոչում շնորհելու մասին ՀՀ կառավարության կողմից սահմանված պահանջներին, ինչպես նաև ներկայացրեց հավակնորդի թեկնածության վերաբերյալ համապատասխան ամբիոնի միաձայն երաշխավորությունը և ֆակուլտետի մրցույթային հանձնաժողովի դրական եզրակացությունը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Տ.Բարսեղյանը, Վ. Քոչարյանը, Ս. Առաքելյանը, Ս.Մեղրյանը, Ա.Գաբուզյանը, Գ.Ղազինյանը:

Խորհուրդը որոշեց անցկացնել բաց քվեարկություն, որի արդյունքում միաձայն բավարարվեց մրցութային հանձնաժողովի միջնորդությունը:

ՈՐՈՇԵՑԻՆ. Հաստատել քվեարկության արդյունքները և միջնորդել ԵՊՀ գիտական խորհրդին՝ եվրոպական և միջազգային իրավունքի ամբիոնի ասիստենտ, իրավ. գիտ. թեկնածու Կ. Գևորգյանին շնորհել դոցենտի գիտական կոչում:

2. ԼՍԵՑԻՆ. Քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի գիտական հաղորդման մասին:

Ամբիոնի դոցենտ, ի.գ.թ. Հ. Ղուկասյանը ներկայացրեց Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության նոր օրենսգրքի արդեն ընդունված հայեցակարգը, նշեց այն փոփոխությունները, որոնք տեղ են գտել նրանում՝ ֆակուլտետի խորհրդին նախորդ հաղորդումը ներկայացնելուց հետո:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Ս. Մեղրյանը, Տ. Դավթյանը, Ն. Այվազյանը, Ա. Իսկոյանը, Ա. Վաղարշյանը, Գ. Ղազինյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ. Ներկայացված գիտական հաղորդումն ընդունել ի գիտություն:

3. ԼՍԵՑԻՆ. Քրեական իրավունքի ամբիոնի հաղորդումը ուսումնական և գիտահետազոտական գործունեության կազմակերպման մասին (զեկ.՝ ամբիոնի վարիչ, ի.գ.դ. Ա. Գաբուզյան):

Հաշվետվությունը կցվում է:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Ա. Մարգարյանը, Ա. Իսկոյանը, Գ. Պետրոսյանը, Տ. Բարսեղյանը, Գ. Ղազինյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ. Քրեական իրավունքի ամբիոնի հաշվետվությունն ընդունել ի գիտություն, իսկ հաշվետու ժամանակահատվածում ամբիոնում կատարված աշխատանքը գնահատել դրական:

4. ԼՍԵՑԻՆ. 2010-2011 ուս. տարվա մագիստրոսական թեզերի և ավարտական աշխատանքների նախապատրաստման վիճակի մասին (զեկուցողներ՝ ամբիոնների վարիչներ) :

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Տ.Բարսեղյանը, Ն.Այվազյանը, Ա. Վաղարշյանը, Վ. Քոչարյանը, Ս.Մեղրյանը, Գ. Ղազինյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ. 2010-11 ուսումնական տարվա մագիստրոսական թեզերի և ավարտական աշխատանքների նախապատրաստման վիճակի վերաբերյալ գրավոր տեղեկացնել խորհրդին:

5. ԼՍԵՑԻՆ. 2011-2012 ուս. տարվա ուսումնական պլանների հաստատման մասին (զեկուցող՝ ի.գ.դ. Հ. Խաչիկյան, Ա. Պետրոսյան):

Զեկուցողն ընդհանուր գծերով ներկայացրեց 2011-2012 ուս. տարվա ուսումնական պլանները, դրանցում տեղ գտած առանձնահատկություններն ու նորամուծությունները:

Խորհրդին ներկայացվեցին բակալավրիատի ուսումնական և աշխատանքային, մագիստրատուրայի ուսումնական և աշխատանքային, ինչպես նաև հեռակա ուսուցման ուսումնական պլանները:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Տ. Բարսեղյանը, Ն. Այվազյանը, Ա. Վաղարշյանը, Ս. Դիլբանդյանը, Ս. Մեղրյանը, Ա. Գաբուզյանը, Գ. Ղազինյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ. Հաստատել ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի 2008-2009 ուս. տարվա ուսումնական պլանները:

6.1. ԼՍԵՑԻՆ. Իրավագիտության ֆակուլտետի քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի միջնորդությունը Ոստիկանության ակադեմիայի ասպիրանտ՝ Արսեն Մարտիրոսյանի թեկնածուական ատենախոսության թեմայի վերտառության փոփոխման վերաբերյալ:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Ս. Դիլբանդյանը, Ա. Գաբուզյանը, Ա. Մարգարյանը, Գ. Ղազինյանը, Տ. Դավթյանը :

ՈՐՈՇԵՑԻՆ.

ա/ Արսեն Մարտիրոսյանի թեկնածուական ատենախոսության նախկինում հաստատած՝ «Քրեական գործերով վարույթի կասեցման հիմնախնդիրները ՀՀ քրեական դատավարությունում» թեման ձևակերպել հետևյալ վերտառությամբ՝ «Քրեական գործերով վարույթի կասեցման հիմնախնդիրները ՀՀ քրեական դատավարության մինչդատական վարույթում»,

բ/ միջնորդել ԵՊՀ ռեկտորատին հաստատելու իրավագիտության ֆակուլտետի խորհրդի սույն որոշումը:

6.2. ԼՍԵՑԻՆ. Իրավագիտության ֆակուլտետի մեթոդական խորհրդի միջնորդությունը՝ եվրոպական և միջազգային իրավունքի ամբիոնի դոցենտ, իրավ. գիտ. թեկնածու
Վ. Հովհաննիսյանի «Քրեական արդարադատության սկզբունքները միջազգային իրավունքում (էվոլյուցիան և իմպլեմենտացիայի առանձնահատկությունները)» վերտառությամբ մենագրությունը տպագրության երաշխավորելու մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Ռ. Մելիքյանը, Վ. Քոչարյանը, Կ. Գևորգյանը, Տ. Դավթյանը, Գ.Ղազինյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ. Հաշվի առնելով քաղաքացիական իրավունքի ամբիոնի միջնորդությունը և ֆակուլտետի մեթոդական խորհրդի դրական եզրակացությունը, ինչպես նաև այն, որ նշված աշխատությունը գրված է պատշաճ գիտական մակարդակով և ունի ինչպես տեսական, այնպես էլ գործնական կարևոր նշանակություն, Վ. Հովհաննիսյանի «Քրեական արդարադատության սկզբունքները միջազգային իրավունքում (էվոլյուցիան և իմպլեմենտացիայի

առանձնահատկությունները)» վերտառությամբ մենագրությունը երաշխավորել տպագրության:

6.3. ԼՍԵՑԻՆ. Քաղաքացիական իրավունքի ամբիոնի միջնորդությունը ամբիոնի հեռակա ուսուցմամբ ասպիրանտ Վարդուհի Դանիելյանի ատենախոսության թեմայի հաստատման և գիտական ղեկավար նշանակելու մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Տ. Բարսեղյանը, Ս. Մեղրյանը, Գ. Ղազինյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

ա) հաստատել Վարդուհի Դանիելյանի՝ «Գործարար շրջանառությունում էլեկտրոնային ձևով կնքվող գործարքների իրավական կարգավորման հիմնախնդիրները (իրավահամեմատական վերլուծություն)» ատենախոսության թեման, բնագավառը՝ հումանիտար գիտություններ, մասնագիտությունը՝ իրավագիտություն, շիֆրը (կոդը) ԺԲ.00.03. առարկաներ՝ քաղաքացիական, առևտրային (կոմերցիոն), միջազգային մասնավոր, ընտանեկան, աշխատանքային, սոցիալական ապահովության իրավունք:

բ) Վարդուհի Դանիելյանի գիտական ղեկավար նշանակել իրավ. գիտ. դոկտոր, դոցենտ Ա. Հայկյանցին,

գ) միջնորդել ԵՊՀ ռեկտորատին հաստատել իրավագիտության ֆակուլտետի խորհրդի որոշումը:

6.4. **ԼՍԵՑԻՆ.** Իրավագիտության ֆակուլտետի պետության և իրավունքի տեսության ու պատմության ամբիոնի ասպիրանտ Մոհսեն Սաբեթղադամ Զահրոմիին եվրոպական և միջազգային իրավունքի ամբիոն տեղափոխելու և նրա ատենախոսության թեմայի հաստատման ու գիտական ղեկավար նշանակելու մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Վ. Քոչարյանը, Ա. Վաղարշյանը, Ա. Գաբուզյանը, Գ. Ղազինյանը, Տ. Դավթյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

ա/ բավարարել պետության և իրավունքի տեսության ու պատմության ամբիոնի միջնորդությունը և Մոհսեն Սաբեթղադամ Զահրոմիին տեղափոխել եվրոպական և միջազգային իրավունքի ամբիոն,

բ/ հաստատել Մոհսեն Սաբեթղադամ Զահրոմիի՝ «Կրոնական փոքրամասնությունների միջազգային-իրավական պաշտպանության հիմնախնդիրները» ատենախոսության թեման, բնագավառը՝ հումանիտար գիտություններ, մասնագիտությունը՝ իրավագիտություն, շիֆրը ԺԲ. 00.06 - «Միջազգային իրավունք»:

գ/ միջնորդել ԵՊՀ ռեկտորատին հաստատելու իրավագիտության ֆակուլտետի խորհրդի սույն որոշումը:

6.5. **ԼՍԵՑԻՆ.** Քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի միջնորդությունը ամբիոնի հեռակա ասպիրանտ Նելլի Աղաբաբյանի թեկնածուական ատենախոսության թեմայի հաստատման և ղեկավար նշանակելու մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Ս. Դիլբանդյանը, Ա. Գաբուզյանը, Տ. Դավթյանը, Գ. Ղազինյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

ա/ հաստատել Նելլի Աղաբաբյանի՝ «Անչափահասների գործերով վարույթի իրավական և տեսական հիմքերի զարգացումը ՀՀ քրեական դատավարությունում» ատենախոսության թեման, բնագավառը՝ հումանիտար գիտություններ,

մասնագիտությունը՝ իրավագիտություն, շիֆրը ԺԲ-00.04 - «Դատարանակազմություն, Քաղաքացիական դատավարություն, Քրեական դատավարություն, Կրիմինալիստիկա, Դատական փորձաքննություն, Փաստաբանություն, Օպերատիվ-հետախուզական գործունեության տեսություն»,

բ/ Նելլի Աղաբաբյանի գիտական ղեկավար նշանակել իրավ. գիտ. թեկնածու, դոցենտ՝ Ս. Դիլբանդյանին,

գ/ միջնորդել ԵՊՀ ռեկտորատին հաստատելու իրավագիտության ֆակուլտետի խորհրդի սույն որոշումը:

6.6. **ԼՍԵՑԻՆ.** Իրավագիտության ֆակուլտետի եվրոպական և միջազգային իրավունքի ամբիոնի միջնորդությունը ամբիոնի հայցորդ Անի Ղարիբջանյանի ատենախոսության թեմայի հաստատման ու գիտական ղեկավար նշանակելու մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Վ. Քոչարյանը, Ա. Վաղարշյանը, Ա. Գաբուզյանը, Գ. Ղազինյանը, Տ. Դավթյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

ա/ հաստատել Ա. Ղարիբջանյանի՝ «Տարածաշրջանային միջազգային կազմակերպությունները և ՀՀ քաղաքական ու սոցիալական անվտանգության հիմնախնդիրները» վերտառությամբ ատենախոսության թեման, բնագավառը՝ հումանիտար գիտություններ, մասնագիտությունը՝ իրավագիտություն, շիֆրը ԺԲ. 00.06 - «Միջազգային իրավունք»:

բ/ միջնորդել ԵՊՀ ռեկտորատին հաստատելու իրավագիտության ֆակուլտետի խորհրդի սույն որոշումը:

6.7. **ԼՍԵՑԻՆ.** Քաղաքացիական դատավարության ամբիոնի միջնորդությունը ամբիոնի դոցենտ, ի.գ.թ. Վահե Հովհաննիսյանին թեկնածուական ատենախոսություններ ղեկավարելու իրավունք տալու մասին :

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Ս. Մեղրյանը, Հ. Խաչիկյանը, Ա. Իսկոյանը, Տ. Դավթյանը, Գ. Ղազինյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ. Հաշվի առնելով քաղաքացիական դատավարության ամբիոնի միջնորդությունը, ինչպես նաև այն, որ Վահե Հովհաննիսյանը 2005 թվականին թեկնածուական ատենախոսություն պաշտպանելուց հետո մշտապես զբաղվում է գիտական գործունեությամբ, հեղինակ է 2 մենագրությունների, ուսումնաօժանդակ ձեռնարկի, 10-ից ավելի գիտական հոդվածների,

միջնորդել ՀՀ ԲՈՀ-ին՝ Վահե Հովհաննիսյանին տալ ԺԲ. 00.04 - «Դատական իրավունք – դատարանակազմություն, քաղաքացիական դատավարություն, քրեական դատավարություն, կրիմինալիստիկա, դատական փորձաքննություն, օպերատիվ-հետախուզական գործունեության տեսություն» շիֆրով թեկնածուական ատենախոսություն ղեկավարելու իրավունք:

Խորհրդի նախագահ *Գ. Ղազինյան*

Խորհրդի քարտուղար *Տ. Դավթյան*